



ԿԴ/0094/01/20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Կոտայքի մարզի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Գ.Շահբազյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Դանիելյան
Ա.Նիկողոսյան
Մ.Հարությունյան

17 հոկտեմբերի 2025 թվական

ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝
մասնակցությամբ դատավորներ՝

Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Ալեքսանդր Ավետիքի
Մանուկյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի
փետրվարի 14-ի որոշման դեմ պաշտպան Գ.Ավագյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2019 թվականի մայիսի 2-ին, ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 46102019 քրեական գործը:

Նախաքննության մարմնի՝ 2020 թվականի հունիսի 25-ի որոշմամբ Ալեքսանդր Ավետիքի Մանուկյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նախաքննության մարմնի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ալեքսանդր Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

2020 թվականի հուլիսի 20-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ի դատավճռով Ա.Մանուկյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում՝ 6 (վեց) ամիս ժամկետով՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկելով՝ 1 (մեկ) տարի ժամկետով: Ա.Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը թողնվել է անփոփոխ: Տուժող Հ.Կ.-ի իրավահաջորդ Ա.Մ.-ի քաղաքացիական հայցը թողնվել է առանց քննության: Ա.Մանուկյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բոնագանձվել է 117.600 (հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ որպես փորձաքննության կատարման համար ծախսված գումարի փոխհատուցում: Նույն դատավճռով վճռվել է նաև իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնում պահվող ու նույն բաժնի աշխատակիցների պահպանությանը հանձնված «Կամագ-5511» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի և «Տոյոտա Կոռոլա 1.8» մակնիշի ** ** *** հաշվառման

համարանիշի ավտոմեքենաները վերադարձնել՝ համապատասխանաբար Ս.Հ.-ին և Ա.Մ.-ին:

3. Դատախազի, տուժողի իրավահաջորդի և պաշտպանի վերաքննիչ բողոքների քննության արդյունքում, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2024 թվականի փետրվարի 14-ին որոշում է կայացրել բողոքները մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ պաշտպան Գ.Ավագյանը բերել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և միաժամանակ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման անհրաժեշտություն:

Բողոքի հեղինակը նախ փաստարկել է, որ նախաքննությամբ ձեռք բերված փորձագիտական եզրակացությամբ, որը դրված էր մեղադրանքի հիմքում, և դատաքննության ընթացքում ստացված եզրակացությամբ որպես ճանապարհային երթևեկության բնագավառը կանոնակարգող դրույթին հակասող գործողություն նշվել են միմյանցից էապես տարբերվող գործողություններ, որոնք, ըստ բողոքի հեղինակի՝ ունեն տարբեր վարչաիրավական բնորոշում, մինչդեռ իրարից էապես տարբերվող արարքներին փորձագետների կողմից տրվել է վարչաիրավական գրեթե նույն գնահատականը: Նման փաստական հանգամանքների պայմաններում, ընդհուպ մինչև դատաքննության ավարտը, մեղադրանքի կողմը չի հստակեցրել, թե մեղադրյալ Ա.Մանուկյանին այդ գործողություններից որն է վերագրում: Այդ հանգամանքին անդրադարձ չի կատարել նաև Առաջին ատյանի դատարանը և իր

դատական ակտում չի կոնկրետացրել, թե համապատասխան գործողություններից որն է դիտարկել որպես մեղադրանքում ձևակերպված՝ ճանապարհային երթևեկության բնագավառը կարգավորող համապատասխան նորմատիվ դրույթներին հակասող: Արդյունքում, բողոքի հեղինակը եզրահանգել է, որ խախտվել է մեղադրանքի բնույթի և հիմքի մասին տեղեկանալու՝ մեղադրյալ Ա.Մանուկյանի իրավունքը:

5.1. Միևնույն ժամանակ, բողոքի հեղինակը, վերլուծելով վարույթի ընթացքում ստացված փորձագիտական հիշյալ եզրակացությունները, արձանագրել է, որ դրանք հիմնավորված չեն, ուստի, արժանահավատ ապացույցներ չեն և չեն կարող դրվել դատական ակտի հիմքում: Բողոքաբերն արձանագրել է նաև վկաների ցուցմունքների ու դատարանի հետևությունների անհամապատասխանությունը:

5.2. Բողոքաբերը, անդրադառնալով Ա.Մանուկյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը նրա կողմից կրելու հարցին, գտել է, որ պայմանականորեն չկիրառելու միջոցով հնարավոր է հասնել պատժի նպատակներին:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 14-ի որոշումը և ճանաչել ու հռչակել Ա.Մանուկյանի անմեղությունը ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում կամ Ա.Մանուկյանի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել:

Վճռաբեկ բողոքի պատասխանը.

7. Տուժողի իրավահաջորդ Ա.Մ. ներկայացրած վճռաբեկ բողոքի պատասխանում նշել է, որ պաշտպան Գ.Ավագյանը վճռաբեկ բողոքը ներկայացրել է բողոքարկման մեկամսյա ժամկետի խախտմամբ:

Որպես հիմնավորում նշվել է, որ LO117027867AM բեռնային համարով առաքանու առաքման ընթացքի մասին «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության պաշտոնական կայքէջում արտացոլված տեղեկատվության համաձայն՝ առաքանին հասցեատիրոջը հանձնվել է 2024 թվականի մարտի 4-ին, այլ ոչ թե 11-ին, ինչպես նշել է պաշտպան Գ.Ավագյանը:

համարանիշի ավրումքենայի ուղևորուհի Հ.Կ.-ին անգգուշությամբ պատճառել է մահ (...)¹»:

10. Առաջին ատյանի դատարանն իր դատական ակտը պատճառաբանել է հետևյալ կերպ. «(...) [Պ]արզաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտելով սույն գործով ձեռք բերված ապացույցները և դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, արժանահավատության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված ներքին համոզմամբ՝ [Առաջին ատյանի դատարանն] ապացուցված է համարում Ա.Մանուկյանին մեղսագրվող արարքը և այն նրա կողմից մեղավորությամբ կատարելը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

(...)

[Առաջին ատյանի դատարանը գնահատելով դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցները, դրանց համադրման և առկա հակասությունների վերլուծության արդյունքում, արժանահավատ չի համարում պատահարի հանգամանքների վերաբերյալ ամբաստանյալ Ա.Մանուկյանի ցուցմունքը, մասնավորապես, այն, որ պատահարի պահին իր վարած ավրումքենայի արագությունը շատ ցածր է եղել՝ 7-10 կմ/ժ, բացի այդ, ավրումքենաների՝ միմյանց բախվելու պահին իր ավրումքենան հիմնական ճանապարհին չի գտնվել: Մինչ խաչմերուկ հասնելը, ինքն ավրումքենան մոտեցրել է գլխավոր ճանապարհի եզրին և տեսնելով դիմացից եկող «ԿԱՄԱԶ» ավրումքենան՝ սպասել է, որ անցնի, որից հետո գլխավոր ճանապարհ մտնելով՝ պետք է շարունակեր ճանապարհը: Վայրկյանների ընթացքում, մոտ 70-80 մետր հեռավորությունից տեսել է, որ «ԿԱՄԱԶ» ավրումքենան իր ուղղությամբ է շարժվում, բնագոյաբար որոշել է կանգնած տեղից ձախ թեքել ավրումքենան և արագությամբ փորձել «ԿԱՄԱԶ» ավրումքենայից փախցնել, սակայն չի հասցրել և տեղի է ունեցել բախումը:

Ամբաստանյալի հայտնած տեղեկությունը, ավրումքենաների՝ միմյանց բախվելու պահին իր ավրումքենան հիմնական ճանապարհին չգտնվելու,

¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 159-167:

ընդհարման պահին իր ավտոմեքենայի դիրքի, արագության մասին, հերքվել են ինչպես վկաներ Ս.Հ.-ի, Ռ.Վ.-ի, Ա.Դ.-ի ցուցմունքներով, այնպես էլ դատաավտորեինիկական, դատահետքաքանակական և դատաբժշկական համալիր փորձաքննության թիվ 19-1429 և դատաավտորեինիկական կրկնակի փորձաքննության թիվ 00952208 եզրակացություններով:

Այսպես.

Ըստ վկա Ս.Հ.-ի ցուցմունքի՝ Նոր Գեղի-Աշտարակ խճուղու վրա, Եղվարդից դուրս եկող ճանապարհով Ա.Մանուկյանը «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենայով բարձր արագությամբ՝ 80-100կմ/ժ կամ ավելի, դեմ հանդիման է դուրս եկել իրեն, ինքը տեսնելով, որ ամբաստանյալի ավտոմեքենան ուղիղ դեպի իր «ԿԱՄԱԶ» ավտոմեքենան է ընթանում, գլխավոր ճանապարհին արգելակել և ղեկը կտրուկ թեքել է դեպի աջ: Այդ պահին «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենան դեպի ձախ է թեքվել, ավտոմեքենայի աջ մասով բախվել իր ավտոմեքենային:

Վկա Ռ.Վ.-ի ցուցմունքի համաձայն՝ դեպքի օրը՝ 2019թ. մայիսի 2-ին, իր ավտոմեքենայով Եղվարդից դեպի Նոր Գեղի [ճանապարհով] ընթանալիս, մինչև խաչմերուկ հասնելը, «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենան վազանցել է իր ավտոմեքենային: Իսկ դիմացից, դեպի Աշտարակ գնացող ճանապարհով, «ԿԱՄԱԶ» մակնիշի ավտոմեքենան է եկել և տեսնելով, որ «Տոյոտա Կորոլա» մակնիշի ավտոմեքենան նրա ուղղությամբ է վարել, վերջինս արգելակել, աջ է ընդունել, սակայն «Տոյոտա Կորոլա» ավտոմեքենան, հարվածել է նրան:

Վկա Ա.Դ.-ի ցուցմունքի համաձայն՝ դեպքի օրը Եղվարդ-Նոր Գեղի ճանապարհին կանգնած է եղել, լսել է «ԿԱՄԱԶ» մակնիշի ավտոմեքենայի մեկ ազդանշանի ձայն և նկատել մոտեցող երկու ավտոմեքենաներ, որոնցից մարդասար ավտոմեքենան Եղվարդից եկող ճանապարհի ձախակողմյան հարվածով ընթանալիս է եղել դեպի իրենց այգիների կողմը, իսկ «ԿԱՄԱԶ» մակնիշի ավտոմեքենան երթնելով է Նոր Գեղի կողմից: Երկու ավտոմեքենաներն ընթանալիս են եղել 70-80 կմ/ժ արագությամբ և տեղի է ունեցել վթար:

Դատաավտորեինիկական, դատահետքաքանակական և դատաբժշկական համալիր փորձաքննության թիվ 19-1429 եզրակացության համաձայն՝ «Տոյոտա Կորոլա» («TOYOTA COROLLA») մակնիշի, ** ** *** հաշվառման համարանիշի

ավրումեքենայի վարորդն անհավասարազոր ճանապարհների հալման՝ փվյալ չկարգավորվող խաչմերուկում իրականացրել է ոչ պարզաճ և վրանգավոր երթևեկություն՝ խաչմերուկում երկրորդական ճանապարհից գլխավոր ճանապարհ մուտք գործելու ընթացքում ճանապարհը չի զիջել գլխավոր ճանապարհով երթևեկող և խաչմերուկը հատելու հերթականության առումով երթևեկության առավելություն ունեցող, ՍՀ-ի կողմից վարած «ԿԱՄԱԶ» մակնիշի, ** ** *** հաշվառման համարանիշի ավրումեքենային»:

Համաձայն դատաավրուրեխնիկական կրկնակի փորձաքննության թիվ 00952208 եզրակացության՝ «Պարահարին նախորդած ճանապարհաւրանսպորտային իրադրությունում «Տոյոտա Կորոլա 1.8» («TOYOTA COROLLA 1.8») մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավրումեքիլի վարորդը երկրորդական՝ Եղվարդ-Նոր Գեղի ճանապարհով, անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մուրենալիս, ավրումեքիլը վարելով սահմանված արագությունը գերազանցող արագությամբ և ճանապարհը չզիջելով գլխավոր՝ Նոր Գեղի-Աշտարակ ճանապարհով ընթացող «ԿԱՄԱԶ 5511» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավրումեքիլին, թույլ է փվել ՃԵԿ-ի 65-րդ և 96-րդ կետերի, ինչպես նաև «Ճանապարհային երթևեկության անվրանգության սպահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, իր այդ գործողություններով պայմանավորել է փվյալ պարահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու րեխնիկական հնարավորությունից:

(...)

«Նոր Գեղի-Աշտարակ և Եղվարդ-Նոր Գեղի ճանապարհների երթևեկելի մասերի հալման րարածք մուտք գործելու պահից մինչև ընդհարման պահը «Տոյոտա Կորոլա 1.8» («TOYOTA COROLLA 1.8») մակնիշի ավրումեքիլի շարժման հերագծից ակնհայտ է, որ դրա վարորդ Ա.Մանուկյանի ցուցմունքներում նշված հանգամանքներում նրա վարած ավրումեքիլն՝ ընդհարման պահին ունեցած դիրքով, ընդհարման րեղում չէր կարող հայրնվել»:

Անդրադատնալով սույն քրեական գործով նշանակված դատաավրուրեխնիկական փորձաքննությունների եզրակացություններին

գնահատմանը, [Առաջին արյանի դիտարարման արձանագրում է, որ երկու եզրակացություններում էլ պարահարի առաջացման պատճառ է դիտարկվել Ա.Մանուկյանի վարած ավրոմեքենայի կողմից «ԿԱՄԱԶ» մակնիշի ավրոմեքենային ճանապարհը չզիջելու հետ կապված խախտումը, մասնավորապես՝ ՃԵԿ-ի 2.4՝ «Զիջել ճանապարհը» ճանապարհային առավելության նշանի, ՃԵԿ-ի 96-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալը:

Ավելին, կրկնակի դատաավորությունիկական փորձաքննությամբ արձանագրվել է, որ Ա.Մանուկյանը, իր վարած ավրոմեքենայով, չզիջելով ճանապարհը, մուտք է գործել «ԿԱՄԱԶ» մակնիշի ավրոմեքենայի ընթացագրի, ապա իր նախընտրած ուղղությամբ երթևեկությունը շարունակելու փոխարեն, կատարել է ձախ մանևրում: Այլ խոսքով, նման պայմաններում [Առաջին արյանի դիտարարման այլևս հաստատված է համարում, որ Ա.Մանուկյանը, իր վարած ավրոմեքենայով մուտք է գործել Նոր Գեղի-Աշտարակ ճանապարհների խաչմերուկ:

(...) [Գնահատելով սույն գործով ձեռք բերված թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցությունը, [Առաջին արյանի դիտարարման հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշով հաստատված է համարում ամբաստանյալ Ա.Մանուկյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունը կատարելը և գտնում է, որ նրան մեղսագրվող արարքը որակվել է ճիշտ, այդ արարքի համար նա ենթակա է քրեական պարասխանարվության ու պարժի: (...)»²:

11. Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով վիճարկվող դատական ակտը, արձանագրել է հետևյալը. «(...) [Առաջին արյանի դիտարարման, Ա.Մանուկյանին առաջադրված մեղադրանքում մեղադրական դատական ակտ կայացնելու հարցում, հանգել է հիմնավորված հետևության, և մեղադրական դատական ակտ կայացնելու իրավաչափության առնչությամբ [Առաջին արյանի դիտարարման հետևությունների հետ, չհամաձայնվելու իրավաչափ հիմքեր չկան:

² Տե՛ս քրեական գործ, հատոր 8-րդ, թերթեր 90-122:

(...) [Առաջին արյանի դ/աբարանի (...) դիրքորոշումներն ու եզրահանգումներն առկա պայմաններում, ոչ միայն բավարար չափով փաստարկված են, այլև բխում են գործի օբյեկտիվ տվյալներից:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վերաքննիչ դատարանը գտնում է, որ այդ առնչությամբ պաշտպանի վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունների հետ համաձայնվելու իրավաչափ հիմքեր չկան:

Ինչ վերաբերում է պաշտպանի կողմից ներկայացված պնդմանն այն մասին, որ Ա.Մանուկյանն իր արարքով չի խախտել ՃԵԿ-ի 2.4՝ «Զիջել ճանապարհը» ճանապարհային առավելության նշանի, ՃԵԿ-ի 96-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնները, հետևաբար չի կատարել՝ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանցագործություն, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ կոնկրետ դեպքում, վերը բերված հիմնավորումների համադրությամբ, դրանք ոչ միայն բավարար չափով փաստարկված չեն, այլև չեն կարող որոշիչ նշանակություն ունենալ պաշտպանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքն այդ մասով (վերաբերելի մասով) բավարարելու՝ սույն գործով վիճարկվող դատական ակտը բեկանելու և Ա.Մանուկյանի նկատմամբ արդարացման դատական ակտ կայացնելու համար:

Ինչ վերաբերում է նաև պաշտպանի պնդմանը՝ իրենց իսկ կողմից ներկայացված միջնորդությունների արդյունքում, ի նկատի ունենալով վերաքննիչ բողոքում նշված փաստարկները կրկնակի դատաավորությունիկական և դատաբժշկական համալիր փորձաքննություն նշանակելու, (փորձագետին) պարոն Ծարուրյանին հարցաքննելու և այլնի անհրաժեշտության վերաբերյալ, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ կոնկրետ դեպքում, վերը բերված հիմնավորումների համադրությամբ, դրանք (առկա պայմաններում) արդեն իսկ ոչ միայն բավարար չափով փաստարկված չեն, այլև չեն կարող իրավական արժեք և որոշիչ նշանակություն ունենալ պաշտպանի կողմից ներկայացված [համապատասխան] միջնորդությունները բավարարելու համար:

Այս առնչությամբ, հարկ է վերստին նշել, որ սույն գործով, վիճարկվող դատական ակտում, ի թիվս այլնի առկա է նաև արձանագրում այն մասին, որ.

«(...) Անդրադատնալով սույն քրեական գործով նշանակված դատաստիճանական փորձաքննությունների եզրակացությունների գնահատմանը, [Առաջին արյանի դատարանն արձանագրում է, որ երկու եզրակացություններում էլ պատահարի առաջացման պատճառ է դիտարկվել Ա.Մանուկյանի վարած ավտոմեքենայի կողմից «ԿԱՄԱԶ» մակնիշի ավտոմեքենային ճանապարհը չգիջելու հետ կապված խախտումը, մասնավորապես՝ ՃԵԿ-ի 2.4՝ «Զիջել ճանապարհը» ճանապարհային առավելության նշանի, ՃԵԿ-ի 96-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալը: (...)»:

Այս առնչությամբ, սույն գործով, վիճարկվող դատական ակտում, ի թիվս այլնի առկա է նաև արձանագրում այն մասին, որ. «(...) Դատաքննության ընթացքում փորձագետ Փ.Ծատուրյանը ցուցմունք է տվել այն մասին, որ (...)»:

(...) Հարկ նշել, որ պաշտպանության կողմի հիշյալ պնդումն (առկա պայմաններում) չի բխում նաև (...) վերաբերելի իրավակարգավորումներից և արժաժվող հարցի իմաստով ինդրո առարկային առնչվող սույն գործի վերաբերելի տվյալներից:

Բացի այդ, զուր արձանագրման առումով, հարկ է նշել նաև, որ արժաժվող հարցի իմաստով, ինդրո առարկային առնչվող հարցադրումներին արդեն իսկ համապատասխան անդրադարձ է կատարվել, Վերաքննիչ դատարանի կողմից, սույն գործով 14.02.2024թ. թվագրմամբ դատական նիստի շրջանակներում:

Ինչ վերաբերում է նաև պաշտպանի վերաքննիչ բողոքում տեղ գրած պնդմանն՝ արագության գերազանցման (այդ առնչությամբ [Առաջին արյանի դատարանի դիտարկումը վիճարկելու) վերաբերյալ, ապա Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն գործով, վիճարկվող դատական ակտում տեղ գրած [Առաջին արյանի դատարանի հիշյալ արձանագրման հետ չհամաձայնվելու, այն որպես այդպիսին չդիտարկելու պարագայում անգամ, (առկա պայմաններում) նշված հանգամանքն ինքնին բավարար հիմք չի կարող հանդիսանալ պաշտպանի վերաքննիչ բողոքը (վերաբերելի մասով) բավարարելու համար:

Ինչ վերաբերում է նաև պաշտպանի վերաքննիչ բողոքում ներկայացված մյուս փաստարկներին ու դատողություններին, ապա հարկ է արձանագրել, որ սույն որոշմամբ վերը շարադրված իրավական դիրքորոշումները, վերլուծություններն ու դատողություններն իրենց համակցության մեջ արդեն իսկ ամբողջությամբ ներառում են դրանց վերաբերյալ Վերաքննիչ դատարանի մտրեցումներն ու բարձրացված հարցերի պատասխաններն, ուստի լրացուցիչ առանձին-առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է: (...)»³:

12. 2024 թվականի մայիսի 7-ին Վճռաբեկ դատարան է ստացվել պաշտպան Գ.Ավագյանի միջնորդությունը, որով վերջինս խնդրել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով մեղադրյալ Ա.Մանուկյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել և քրեական վարույթը կարճել⁴:

Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթները կարգավորող՝ 483-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կայացված դատական ակտերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով»:

Վերոգրյալից հետևում է, որ 2022 թվականի հուլիսի 1-ից հետո կայացված դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են 2022 թվականի հուլիսի 1-ից գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Հետևաբար, սույն բողոքի քննությունն իրականացնելիս, որպես Վճռաբեկ դատարանում բողոքի քննության ընթացակարգ, հիմք է ընդունվում 2022 թվականի հուլիսի 1-ից գործող կարգը: Մինևսույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Ա.Մանուկյանի վերաբերյալ քրեական գործը քննության է առել, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտի իրավաչափությունը գնահատել է 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների

³ Տե՛ս քրեական գործ, հատոր 11, թերթեր 36-142:

⁴ Տե՛ս քրեական գործ, հատոր 13, թերթեր 152-158:

շրջանակներում, ուստի ստորադաս դատարանների հետևությունների իրավաչափության գնահատման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները:

14. Վճռաբեկ դատարանը հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքով վիճարկվում է մեղադրյալ Ա.Մանուկյանի մեղավորության մասին ստորադաս դատարանների հետևությունը, գտնում է, որ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով Ա.Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված մեղադրանքով քրեական հետապնդումը դադարեցնելու միջնորդությանը հնարավոր է անդրադառնալ միայն հիշյալ հանցանքը կատարելու մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցված լինելու հարցը քննարկելուց հետո: Ուստի սույն վարույթով նախևառաջ պետք է քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցը. արդյո՞ք հիմնավորված է ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը կատարելու մեջ մեղադրյալ Ա.Մանուկյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը:

Նախքան բարձրացված իրավական հարցին անդրադառնալը, Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վճռաբեկ բողոքով նախնական վարույթի շրջանակում, ի թիվս այլնի, քննարկման առարկա է դարձրել Վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոքն օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու հարցը և արդյունքում կայացվել է պաշտպան Գ.Ավագյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, ուստի վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկին սույն որոշմամբ անդրադարձ չի կատարվում:

14.1. Բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգման ենթարկելով քրեական գործի փաստական հանգամանքների բացահայտման ու քրեական օրենքի կիրառման ճշտությունը, գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի պահանջների պահպանումը, ինչպես նաև ուսումնասիրության ու գնահատման ենթարկելով քրեական գործում առկա նյութերը՝ Վճռաբեկ դատարանը հանգում է հետևության, որ ստորադաս դատարանները ՀՀ

քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքում Ա.Մանուկյանի մեղավորության վերաբերյալ հանգել են ճիշտ հետևության:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առաջադրված մեղադրանքում Ա.Մանուկյանի մեղքը հաստատվում է, իսկ բողոքաբերի փաստարկները հերքվում են գործով ձեռք բերված և ստորադաս դատարանների դատական ակտերում պատշաճ վերլուծված ապացույցների բավարար համակցությամբ, այն է՝ վկաներ Ս.Հ-ի⁵, Ռ.Վ-ի⁶, Ա.Դ-ի⁷ և փորձագետ Ժ.Ծատուրյանի⁸ ցուցմունքներով, դեպքի վայրի⁹ և տրանսպորտային միջոցների¹⁰ զննության արձանագրություններով, դատաբժշկական¹¹, դատաավտոտեխնիկական, դատահետքաբանական ու դատաբժշկական համալիր¹² և դատաավտոտեխնիկական կրկնակի¹³ փորձաքննությունների եզրակացություններով:

Անդրադառնալով սույն որոշման 5-րդ կետում շարադրված վճռաբեկ բողոքի փաստարկին՝ Վճռաբեկ դատարանը նախ հարկ է համարում նկատել, որ համաձայն մեղադրանքի փաստական նկարագրի՝ մեղադրյալ Ա.Մանուկյանի կողմից, ի թիվս այլնի, թույլ են տրվել ՀՀ Կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշմամբ (այսուհետ՝ նաև Ճանապարհային երթևեկության կանոններ) սահմանված կանոնների 96-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, այն է՝ իրականացրել է ոչ պատշաճ և վտանգավոր երթևեկություն, մասնավորապես, խաչմերուկում երկրորդական ճանապարհից գլխավոր ճանապարհի մուտք գործելու ընթացքում ճանապարհը չի զիջել գլխավոր ճանապարհով երթևեկող և խաչմերուկը հատելու հերթականության առումով

⁵ Տե՛ս քրեական գործ, հատոր 3-րդ, դատական նիստի արձանագրություն, թերթ 97:

⁶ Տե՛ս քրեական գործ, հատոր 5-րդ, դատական նիստի արձանագրություն, թերթ 30:

⁷ Տե՛ս քրեական գործ, հատոր 4-րդ, դատական նիստի արձանագրություն, թերթ 14:

⁸ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, դատական նիստի արձանագրություն, թերթ 89 և հատոր 7-րդ, դատական նիստի արձանագրություններ, թերթ 11 և 65:

⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 5-36:

¹⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 65-81:

¹¹ Տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, թերթեր 210-217:

¹² Տե՛ս քրեական գործ, հատոր 2-րդ, թերթեր 47-60:

¹³ Տե՛ս քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 32-59:

առավելություն ունեցող «Կամագ» մակնիշի տրանսպորտային միջոցին, դրանով իսկ պայմանավորել ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից¹⁴։ Դատաավտոտեխնիկական կրկնակի փորձագիտական եզրակացությամբ արձանագրվել է, որ մեղադրյալ Ա.Մանուկյանը, երկրորդական ճանապարհով անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մոտենալիս ճանապարհը չզիջելով գլխավոր ճանապարհով ընթացող «Կամագ» մակնիշի տրանսպորտային միջոցին, թույլ է տվել Ճանապարհային երթևեկության կանոնների 96-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող գործողություններ, դրանով իսկ պայմանավորել ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը՝ ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից¹⁵։ Մեղադրանքի և փորձագիտական եզրակացության վերը շարադրված բովանդակությունը բավարար է արձանագրելու, որ թե՛ մեղադրանքի փաստական նկարագրի, թե՛ դատաավտոտեխնիկական կրկնակի փորձագիտական եզրակացության մեջ որպես մեղադրյալ Ա.Մանուկյանի կողմից թույլ տրված խախտում նշվել է երկրորդական ճանապարհով խաչմերուկ մուտք գործելիս գլխավոր ճանապարհով ընթացող «Կամագ» մակնիշի տրանսպորտային միջոցին ճանապարհը չզիջելը, ինչով էլ պայմանավորվել է ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը՝ զրկվելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից։ Միևնույն ժամանակ, երկու դեպքում էլ Ա.Մանուկյանի գործողությունը դիտարկվել է ճանապարհային երթևեկության բնագավառը կանոնակարգող նույն նորմատիվ դրույթներին հակասող։ Ընդ որում՝ թեև մեղադրանքի ձևակերպման մեջ օգտագործվել է *«խաչմերուկում երկրորդական ճանապարհից գլխավոր ճանապարհ մուտք գործելու ընթացքում»*, իսկ հիշյալ եզրակացությամբ՝ *«երկրորդական ճանապարհով անհավասարազոր ճանապարհների խաչմերուկին մոտենալիս»* արտահայտություններ,

¹⁴ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը։

¹⁵ Տե՛ս դատաավտոտեխնիկական կրկնակի փորձագիտական եզրակացության՝ հետևություններ մասի 11-րդ և 12-րդ կետերը, քրեական գործ, հատոր 6-րդ, թերթեր 32-59։

այնուամենայնիվ, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ այդ արտահայտությունների բովանդակությունները, սույն վարույթի փաստական հանգամանքների պայմաններում, հավասար իմաստային ծանրաբեռնվածություն ունեն:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում պաշտպանության իրավունքի խախտման առնչությամբ բողոքաբերի պնդմանը: Նշվածից զատ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի փաստակազմով պայմանավորված պարզման ենթակա հանգամանքների մասով դատաավտոտեխնիկական կրկնակի փորձագիտական եզրակացության, ինչպես նաև փորձագիտական համալիր եզրակացության համապատասխան մասերի հիմնավորվածությունը և արժանահավատությունը կասկածի տակ դնելու հիմքերը բացակայում են:

Այսպիսով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը կատարելու մեջ մեղադրյալ Ա.Մանուկյանի մեղավորության վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունը հիմնավորված է:

15. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված *երկրորդ* իրավական հարցը հետևյալն է. արդյո՞ք մեղադրյալ Ա.Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական հետապնդումը չպետք է հարուցվի, իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե (...)*

12) անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր կամ հատուկ մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից. (...):»

Նույն օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական վարույթը ենթակա է կարճման, եթե՝*

(...)

3) մեղադրյալի նկատմամբ դադարեցվել է քրեական հետապնդումը, և սպառվել են վարույթը շարունակելու բոլոր հնարավորությունները. (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Միջին ծանրության հանցագործություններ են համարվում (...) անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պարիժը չի գերազանցում փաստ փարի ժամկետով ազատազրկումը»:

Նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հերկյալ ժամկետները.

(...)

2) հինգ փարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

(...)

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: (...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ավրոմորիլի կամ մեխանիկական այլ փրանսպորտային միջոցի վարորդի կողմից ճանապարհային երթևեկության անվրանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ փրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որը մարդու առողջությանն անզգուշությամբ պարճառել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝

պարժվում է (...):

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ՝

պարժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ փարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք փարի ժամկետով: (...)»:

16. Մեջբերված նորմերի վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը վաղեմության ժամկետն անցնելը դիտում է որպես քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ քրեական հետապնդում չպետք է հարուցվի,

իսկ հարուցված քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման, եթե անցել են վաղեմության ժամկետները:

17. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը կատարվել է **2019 թվականի մայիսի 2-ին**¹⁶: Ա.Մանուկյանի մեղավորությունը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է 2023 թվականի նոյեմբերի 20-ին¹⁷, որը բողոքարկվել է Վերաքննիչ դատարան, իսկ Վերաքննիչ դատարանը բողոքների քննության արդյունքում որոշում է կայացրել 2024 թվականի փետրվարի 14-ին¹⁸: 2024 թվականի ապրիլի 17-ին Վճռաբեկ դատարան է ստացվել նշված որոշման դեմ Ա.Մանուկյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ վերադարձվել է՝ տրամադրելով 10-օրյա ժամկետ՝ թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու համար¹⁹: 2024 թվականի մայիսի 6-ին ՀՀ Վճռաբեկ դատարան է ստացվել Ա.Մանուկյանի պաշտպանի վճռաբեկ բողոքը, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի օգոստոսի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ²⁰:

18. Սույն որոշման նախորդ կետում մեջբերված փաստական տվյալների վերլուծությունից ակնհայտ է, որ Ա.Մանուկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով մեղսագրված արարքի՝ որպես միջին ծանրության հանցանքի համար նույն օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու հնգամյա ժամկետը լրանալու օրվա՝ **2024 թվականի մայիսի 2-ի** դրությամբ, վերջինիս նկատմամբ առկա չի եղել օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ, ուստի նրա նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը պետք է դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու պատճառաբանությամբ և քրեական վարույթը՝ այն շարունակելու բոլոր հնարավորությունները սպառված լինելու հիմքով կարճել: Նման

¹⁶ Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

¹⁷ Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:

¹⁸ Տե՛ս սույն որոշման 3-րդ կետը:

¹⁹ Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթ 2 և թերթեր 75-77:

²⁰ Տե՛ս քրեական գործ, հատոր 13-րդ, թերթեր 81-82 և սույն որոշման 4-րդ կետը:

պայմաններում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բողոքների՝ սույն որոշման 5.2-րդ կետում նշված փաստարկին անդրադառնալն առարկայազուրկ է:

18.1. Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը պետք է վերացնել, իսկ որպես իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նաիրիի բաժնում պահվող ու նույն բաժնի աշխատակիցների պահպանությանը հանձնված «Կամազ-5511» մակնիշի ** **
*** հաշվառման համարանիշի և «Տոյոտա Կոռոլա 1.8» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենաները՝ վերադարձնել՝ համապատասխանաբար Ս.Հ-ին և Ա.Մ-ին:

Տուժողի իրավահաջորդ Ա.Մ-ի քաղաքացիական հայցը պետք է թողնել առանց քննության, նկատի ունենալով, որ այն առանց քննության թողնելու մասին որոշման դեմ վերանայման բողոք չի ներկայացվել:

Մինչև սույն ժամանակ, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 167-րդ ու 315-րդ հոդվածների բովանդակային վերլուծությունից հետևում է, որ վարութային ծախսերի հարցն ընդգրկված չէ անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու դեպքում դատարանի կողմից լուծման ենթակա հարցերի շրջանակում, հետևաբար քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու դեպքում վարութային ծախսերը ենթակա չեն բռնագանձման: Ուստի, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Մանուկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնելու և վարույթը կարճելու պայմաններում վարութային ծախսերն Ա.Մանուկյանի վրա չեն կարող դրվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ, 13-րդ, 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 361-րդ, 363-րդ, 385-րդ ու 387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեղադրյալ Ալեքսանդր Ավետիքի Մանուկյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ի դատավճիռն և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 14-ի որոշումը թեկանել:

2. Ալեքսանդր Ավետիքի Մանուկյանի նկատմամբ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական հետապնդումը դադարեցնել՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով ու քրեական վարույթը կարճել:

3. Ալեքսանդր Ավետիքի Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրությունը՝ վերացնել:

4. Տուժողի իրավահաջորդ Ա.Մ-ի քաղաքացիական հայցը թողնել առանց քննության:

5. Որպես իրեղեն ապացույց ճանաչված և ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Նախրիի բաժնում պահվող ու նույն բաժնի աշխատակիցների պահպանությանը հանձնված «Կամագ-5511» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը վերադարձնել Ս.Հ-ին, իսկ «Տոյոտա Կոռոլա 1.8» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը՝ Ալեքսանդր Ավետիքի Մանուկյանին:

6. Վարությային ծախսերի հարցը համարել լուծված՝ այն Ալեքսանդր Ավետիքի Մանուկյանից բռնագանձման ենթակա չլինելու հիմքով:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ